Կարծիք

««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ

2026 թվականի մայիսի 20-ին շրջանառության մեջ դրված ««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ինչպես նաև ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը, ոչ միայն չեն բխում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության ուղղություններից, այլև առնվազն անմիջական վտանգ է այդ բնագավառի այնպիսի հիմնական սկզբունքների երաշխավորման ու գործնական իրացման համար, ինչպիսիք են՝ երթևեկության մասնակիցների կյանքի և առողջության գերակայության, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ժամանակ քաղաքացիների, հասարակության և պետության իրավունքների ու օրինական շահերի հաշվեկշռվածության ապահովման սկզբունքներին:

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում ի թիվս այլնի, կրելով նաև ճանապարհային երթևեկության կազմակերպման, ընդհանուր օգտագործման ճանապարհներին երթևեկության մասնակիցների անվտանգության ապահովման, վարորդների պատրաստման, ճանապարհային երթևեկության կանոնների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտումների նախականխման, հայտնաբերման և օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների ձեռնարկման պետական քաղաքականության ուղղություններն ապահովելու պարտականությունները՝ պետությունն ուղղակիորեն պարտավոր է ներդնել և իրականացնել այնպիսի իրավական միջոցառումներ, որոնք միտված կլինեն հիշյալ ուղղությունների լավագույնս երաշխավորմանը:

Մինչդեռ, ««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) նախատեսված փոփոխությունների ու լրացումների արդյունքում ներդրվող կառուցակարգը կարող է անմիջական սպառնալիք հանդիսանալ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման տեսանկյունից:

Այսպես. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 29-րդ հոդվածում առաջարկվող փոփոխության համաձայն՝ վարելու իրավունքից զրկելու մասին ՀՀ Ոստիկանության՝ ուժի մեջ մտած ակտի հիմքով դադարեցված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վարելու իրավունքը, վարելու իրավունքը դադարելու հիմքը վերանալուց հետո 1 տարվա ընթացքում դիմելու դեպքում, մեկ անգամ վերականգնել առանց որակավորման քննություններ հանձնելու՝ օրենքով

սահմանված պետական տուրքի վճարմամբ՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով, իսկ երկրորդ կամ հաջորդ անգամները՝ որակավորման քննություններ հանձնելուց հետո:

Նման մոտեցումը, սակայն, խիստ խնդրահարույց է հատկապես տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու վարչական տույժի հանգեցնող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված զանցանքների տեսակների ու բնույթի վերլուծության համատեքստում: Մասնավորապես՝ վարելու իրավունքից զրկելու վարչական տույժը, որպես կանոն, խիստ պատասխանատվության միջոցի տեսակ է, կարող է նշանակվել մեկ ամսից մինչև երեք տարի ժամկետով և կիրառելի է առավել ծանր հանրային վտանգավորություն ունեցող այնպիսի վարչական իրավախախտումների համար, ինչպիսիք են, ի թիվս այլնի, տրանսպորտային միջոցը կանգնեցնելու մասին ոստիկանության ծառայողի՝ օրենքով սահմանված կարգով տրված պահանջը վարորդների կողմից դիտավորյալ չկատարելը, երթևեկության սահմանված արագությունը 81 կմ/ժ և ավելի գերազանցելը, տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը, տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումներ պարբերաբար կատարելը:

Այս առնչությամբ ընդգծելի է հատկապես այն հանգամանքը, որ թեև նորմատիվ իրավական ակտի նախագծի ընդունման հիմնավորմամբ խոսվում է միջազգային փորձի ուսումնասիրության մասին, սակայն, դրանում փաստացի միջազգային փորձից որևէ օրինակ չի բերվել, ինչն առնվազն հիմնազուրկ է դարձնում Նախագծի հեղինակի այս փաստարկումը:

Դրանից բացի, Նախագծի հիմնավորումներում չեն բացահայտվել Նախագծի անցումային դրույթներով 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի մայիսի 1-ը ներառյալ կայացրած ակտի հիմքով դադարեցված վարելու իրավունքը վերականգնելու նկատմամբ Նախագծի հետադարձ ուժով կիրառման կանոններ նախատեսելու հեղինակի նպատակները, նշյալ ժամանակահատվածն ընտրելու հիմնավորումներն ու նպատակահարմարությունը: Նման տևական ժամանակահատվածի շրջանակներում որակավորման քննությունները հաղթահարել չկարողացած անձանց վարելու իրավունքն առանց որակավորման քննություններ հանձնելու վերականգնելը ինքնին խիստ խնդրահարույց է հանրային անվտանգության տեսանկյունից:

Այս համատեքստում էական է մարդու իրավունքների և հատկապես կյանքի իրավունքի ներքո պետության պոզիտիվ պարտավորությունների երաշխավորման անհրաժեշտությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) պրակտիկան ճանապարհային անվտանգության հարցերի վերաբերյալ մոտեցումը հանգում է նրան, որ պետությունները պետք է կանխարգելեն բարձր ռիսկային վարքագծի կրկնությունը և օգտագործեն իրենց տրամադրության տակ գտնվող գործիքները (օրինակ՝ վարորդական իրավունքների կասեցում, բժշկական զննություններ և այլ կառուցվածքային նախազգուշացումներ) *(տե՛ս Smiljanić v. Croatia (No. 35983/14, 2021)* գործով ՄԻԵԴ վճիռը*),* ներպետական իշխանությունները պարտավոր են ապահովել համապատասխան ճանապարհային անվտանգության կարգավորող շրջանակի արդյունավետ գործունեությունը *(տե՛ս Fatih Çakır and Merve*

Nisa Çakır v. Turkey, թիվ *54558/11* և *Marius Alexandru and Marinela Ştefan v. Romania* թիվ *78643/11, § 99, 2020* թ. մարտի *24):* Ավելին, ճանապարհային անվտանգությունը կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ ճանապարհների որակից և ապագա վարորդներին տրամադրվող ուսուցումից, ճանապարհային անվտանգության համատեքստում վերոհիշյալ պոզիտիվ պարտավորությունները ենթադրում են, առաջին հերթին, համապատասխան կանխարգելիչ միջոցառումների համակարգ ունենալու պարտավորություն՝ հանրային անվտանգությունն ապահովելու և ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը նվազագույնի հասցնելու նպատակով *(տե՛ս* Նիկոլաե Վիրգիլիու Տանասեի գործը*, մեջբերված վերևում, § 146-147, 135):*

Այսպիսով, գտնում ենք, որ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց վարելու իրավունքը որակավորման քննությունները հանձնելուց հետո վերականգնելու գործող օրենսդրական կարգավորումները միտված են հենց ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում պետության ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ստանձնած մարդու իրավունքների ապահովմանը, և դրանց վերանայումը կարող է անմիջական սպառնալիք դառնալ երթևեկության մասնակիցների կյանքի և առողջության, քաղաքացիների, հասարակության իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը՝ ի խախտումն մարդու իրավունքների պարտավորությունների:

Դրանից բացի, անհրաժեշտ ենք համարում հատկապես ընդգծել, որ հիշյալ նախագծերի ընդունման գործընթացում շտապողականությունը, և մինչև նախագծերի հանրային քննարկումների ավարտը դրանք արդեն իսկ Կառավարության կողմից ընդունելը խախտում են լավ կառավարման և իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության իրավունքի, դրա թափանցիկության և հաշվետվողականության ապահովման սկզբունքները, ինչն անընդունելի է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք հետ կանչել նախագծերի փաթեթը: